վանդ սովետական կարգերի հաստատումից հետո գավառի կենցաղի բոլոր ճյուղերի մեջ։ Նույնիսկ ինտելիգենտ կանայք չեն կարողանում իրենց վիշտը զսպել և իրենց պարտքն են համարում այդ վիշտը ի լուր ամբողջ հավաքված բազմության բարձրաձայն արտահայտել։ Այդ ողբով ապացուցվում էր հանգուցյալին, թե որչափ ամուր են կապված եղել տանեցիք և բարեկամները նրա հետ, և հազիվ թե կարելի է կասկածել, որ դա ետնագույն ձևափոխություն է նախնական դարերի այն սովորության, որով պահանջվում էր, որ կինն ու ծառաները հետևեն մեռած տղամարդուն դեպի հանդերձյալ աշխարհը և թաղվեն նրա հետ միասին։ Դարերի ընթացքում վերացել է նաև տղամարդկանց մասնակցությունն այդ ողբին, որը նկարագրված է Արտաշես արքայի մահվան և հուղարկավորության ավանդության մեջ, որտեղ տղամարդիկ ևս սիրած թագավորի մոտ իրենց վերքեր էին պատճառում, նույնիսկ անձնասպան լինում[95]։

Կանանց ողբի մեջ պահպանվել է մի մանրամասնություն, որտեղ անդրադարձած է ննջեցյալին զոհվելու վաղեմի սովորությունը։ Լալկան կանանց գովերգերի մեջ շարունակ կրկնվում է ողբացողի պատրաստակամությունն իրեն մատաղ բերելու ննջեցյալին։ Լացուկոծով հագեցրած գովքն անշուշտ նպատակ ուներ ննջեցյալին գոհ ճանապարհ դնելու, թվում է, որպեսզի նա այն աշխարհումն էլ խանդաղատանքով հիշի յուրայիններին, միշտ բարի տրամադրված լինի նրանց նկատմամբ և օժանդակի նրանց հաջողություններին։ Իրենց մատաղ բերելու պատրաստակամության հետ նաև գովաբանում էին ննջեցյալի արտաքինը—նրա հասակը, ջանը, պայծառ երեսը, քաղցր հայացքը, վարժ ձեռքերը, արագաքայլ ոտները, նրանից բուրող հոտը և նրա հրմտությունը որպես երկրագործ, անասնապահ, որսորդ, արհեստավոր, և նրա շնորհքը ժողովրդի մեջ նստել վեր կենալու, խոսելու, դատելու... այս ամենը ծայրահեղ չափազանցություններով։

Տղամարդիկ հետևում էին ննջեցյալին մինչև գերեզմանատուն, որտեղ գերեզմանի փոսը փորած էին լինում ազգական կամ հարևան մարդիկ, հանգուցյալի հետ բարեկամություն արածները։ Նաժի վրայից կարպետի միջից դիակը հանում էին և պատանքված վիճակում իջեցնում գերեզման ու հողով ծածկում։ Առաջին բուռ հողը ձգում էին ամենամերձավոր ազգականները։ Հողաթումբը կնքվում էր քահանայի աղոթքով և թումբի վրա դրած խաչով։ Այնուհետև հուղարկավորները մոտենում էին ննջեցյալի տերերին, ձեռքը սեղմելով իրենց ցանկությունն էին հայտնում և մխիթարություն մաղթում։ Ապա բոլորն էլ ուղևորվում էին ննջեցյալի տունը ժրմաճաց[96] ուտելու։

Տուն մտնելիս բոլորն էլ, ինչպես վերն ասացինք, պիտի ձեռները լվանային, կարծես ցանկանալով մաքրվել այն պղծությունից, որն իրենց էր անցել ննջեցյալից, չնայելով որ նա արդեն մաքրված է եղել նրան լողացնելուց հետո։ Կանայք ևս ողբասացությունից և լացուկոծից հետո սեղան նստելիս

---

95 Մովսես Խորենացի, գ. II, գլ. Կ։

96 Ժրմաճացը կրկին մի մոգական եղանակ էր. ուտելով՝ կերակրել նաև ննջեցյալին։ Ժրմաճացը տրվում էր տարեմը մեկ անգամ, ամեն ընտանիքում նոր և հին ննջեցյալների հոգու փրկության համար՝ մեռելոցի օրը, նաև օրհնել տալով նրանց գերեզմանները։ Թե՛ ժրմաճացին և թե՛ մէռելօցնէրին չէր կարելի խմիչքի բաժակներն իրար զարկել, անհրաժեշտ էր դրա փոխարեն բաժակը ձեռքին, ձեռքը ձեռքին կպցնել՝ առանց ձայնի։ Ժրմաճացը նախնական հասարակությունից որպես վերապրուկ մնացած համայնքային ճաշկերույթների հետքերն են, որոնք կազմակերպվում էին թե՛ թաղման ծեսից հետո և թե՛ որևէ ուրախ ծեսերի առիթով։